

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Ընդունված է 2001 թվականի հոկտեմբերի 23-ին)

Հոդված 5. Պետական կազմակերպությանն ամրացված գույքը

1. Հիմնադիրը կարող է պետական կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

2. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից պետական կազմակերպությանն ամրացված գույքը:

3. Պետական կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

Պետական կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, երե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության

կանոնադրությամբ: Պետական կազմակերպությանն ամրացված գույքը վարձակալության է հանձնվում Կառավարության հաստատած կարգով: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ամբողջությամբ ուղղվում են պետական բյուջե, բացառությամբ այն դեպքերի և չափի, երբ մասնագիտական ուսումնական հաստատության և գործատուների հետ համագործակցության պայմանագրի հիմքով տվյալ վարձակալված տարածքն օգտագործվում է կրթական ծրագրի շրջանակում աշխատանքի վրա հիմնված ուսումնառության մոդելով գործնական աշխատանքային ուսուցում անցնելու և սահմանված որոշակի աշխատանք կատարելու նպատակով:

Վարձակալության չհանձնված ամրացված գույքի օգտագործման արդյունքում պետական կազմակերպության ստացած եկամուտները պետական կազմակերպության սեփականությունն են, երե այլ բան նախատեսված չէ պետական կազմակերպության կանոնադրությամբ:

Պետական կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

4. Հիմնադրի կողմից գույքը պետական կազմակերպության ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

5. Հիմնադրի կողմից պետական կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ պետական կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

Հոդված 5. Պետական կազմակերպությանը հանձնված կամ վարձակալությամբ տրամադրված գույքը

1. Հիմնադիրը կարող է պետական կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման կամ սեփականության իրավունքով հանձնել ցանկացած շարժական գույք, իսկ անշարժ գույքը տրամադրել վարձակալությամբ՝ Կառավարության սահմանված կարգի համաձայն:

2. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից պետական կազմակերպությանը հանձնված շարժական գույքը, ինչպես նաև Կառավարության սահմանված կարգի համաձայն դադարեցնել անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը:

3. Պետական կազմակերպությունն իրավունք չունի իրեն հանձնված կամ վարձակալությամբ տրամադրված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

4. Պետական կազմակերպությունն իրավունք ունի իրեն հանձնված կամ վարձակալությամբ տրամադրված գույքը պետության անունից տրամադրել ենթավարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ: Պետական կազմակերպությանն հանձնված կամ վարձակալությամբ տրամադրված գույքը ենթավարձակալության է հանձնվում Կառավարության հաստատած կարգով:

5. Պետական կազմակերպությանը հանձնված կամ վարձակալությամբ տրամադրված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

6. Հիմնադրի կողմից գույքը պետական կազմակերպության հանձնելը կամ վարձակալության տրամադրելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

7. Հիմնադրի կողմից պետական կազմակերպությանն վարձակալությամբ տրամադրված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա շարժական գույքի նկատմամբ պետական կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:»:

Հոդված 5.1. Համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքը

1. Կառավարության որոշմամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով կարող է ամրացվել ցանկացած գույք:

2. Կառավարությունն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքը:

3. Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

4. Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Կառավարության որոշմամբ կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ: Համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքը վարձակալության է հանձնվում Կառավարության հաստատած կարգով: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ամբողջությամբ ուղղվում են պետական բյուջե:

5. Ամրացված գույքի օգտագործմամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպության ստացած եկամուտները համայնքային ոչ առևտրային կազմակերպության սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ:

6. Համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հայաստանի Հանրապետության սեփականությունն են:

7. Կառավարության կողմից գույքը համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացվելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

8. Կառավարության կողմից համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրա նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

(5.1-ին հոդվածը լրաց. 25.10.23 ՀՕ-315-Ն)

Հոդված 5.1. Համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն հանձնված կամ վարձակալությամբ տրամադրված գույքը

1. Կառավարության որոշմամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման կամ սեփականության իրավունքով կարող է

հանձնել ցանկացած շաբաթական գույք, իսկ անշաբթ գույքը տրամադրել վարձակալությամբ՝ Կառավարության սահմանված կարգի համաձայն:

2. Կառավարությունն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հանձնված շաբաթական գույքը, ինչպես նաև Կառավարության սահմանված կարգի համաձայն դադարեցնել անշաբթ գույքի վարձակալության պայմանագիրը:

3. Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն իրավունք չունի իրեն հանձնված կամ վարձակալությամբ տրամադրված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

4. Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն իրավունք ունի իրեն հանձնված կամ վարձակալությամբ տրամադրված գույքը պետության անունից տրամադրել ենթավարձակալության, եթե դա արգելված չէ Կառավարության որոշմամբ կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ: Համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հանձնված կամ վարձակալությամբ տրամադրված գույքը ենթավարձակալության է հանձնվում Կառավարության հաստատած կարգով:

5. Համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն հանձնված կամ վարձակալությամբ տրամադրված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հայաստանի Հանրապետության սեփականությունն են:

6. Կառավարության կողմից գույքը համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հանձնելը կամ վարձակալության տրամադրելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

7. Կառավարության կողմից համայնքային ոչ առևտրային կազմակերպության վարձակալությամբ տրամադրված անշաբթ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա շաբաթական գույքի նկատմամբ պետական կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:»:

Հոդված 9. Պետական կազմակերպության ստեղծումը

3. Պետական կազմակերպությունն ստեղծվում է հիմնադրի որոշմամբ:

Պետական կազմակերպության հիմնադրման մասին հիմնադրի որոշմամբ սահմանվում են պետական կազմակերպության անվանումը, նրա գործունեության առարկան և նպատակները, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները, պետական կազմակերպությանը սեփականության ~~իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող կամ անհատույց օգտագործման իրավունքով հանձնված շարժական և վարձակալությամբ տրամադրված անշարժ~~ գույքի կազմն ու արժեքը, պետական կազմակերպության կառավարումն իրականացնող այն լիազորված պետական մարմինը, որի ենթակայությանը հանձնվում է պետական կազմակերպությունը, լիազորված պետական մարմնի լիազորությունները, ինչպես նաև օրենքին չհակասող այլ դրույթներ:

Հոդված 13. Պետական կազմակերպության հիմնադիրը

2. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) պետական կազմակերպության հիմնադրումը.

բ) պետական կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) պետական կազմակերպությանը սեփականության ~~իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող պետությանը պատկանող կամ անհատույց օգտագործման իրավունքով հանձնված շարժական և վարձակալությամբ տրամադրված անշարժ~~ գույքի կազմի հաստատումը.

Հոդված 14. Լիազորված պետական մարմինը

2. Լիազորված պետական մարմինը՝

ա) պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) իրականացնում է պետական կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում պետական կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

դ) լսում է պետական կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում պետական կազմակերպությանն ամրացված պետական սեփականության — սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով հանձնված շարժական և վարձակալությամբ տրամադրվող անշարժ գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.